



ՀԱՏՈՒԱԾ ՏՆՕՐԷՆԻՆ ՀՈՒՍԿ ԲԱՆՔԷՆ

... Վերջին ամիսներուն ապաւնէ բառը շատ գործածուեցաւ հայկական, արաբական ու լիբանանեան պարունակի մէջ. Արցախ պարպուեցաւ իր պատմական բնակիչներէն, որոնք ապաւնէ գտան Հայաստանի Հանրապետութենէն ներս: Պաղեստինցի հերոս ժողովուրդին զաակները ռումբերու սարսափին տակ ապաւնէ կը փնտռեն իրենց հայրենիքին մէջ, իսկ դիմադրող Հարաւի ժողովուրդը ապաւինած է հայրենակիցներու հոգածութեան:

Տարիներ շարունակ, երբ մեր շուրջը փոթորիկ էր ու օդին մէջ տազնապի ազդանշաններ կային - դեռ կան ու թերեւս անլիով -, իբրեւ դպրոց փորձեցինք, իսկապէս փորձեցինք, որ այս շրջափակը նուազագոյնը ազդուի արտաքին ազդակներէ, ու հոս՝ եկեղեցիին ու դպրոցին հովանիին տակ, ապրիք ձեր մանկութիւնն ու պատանութիւնը ապահով, հանգիստ, ուրախ միջավայրի մէջ: ... Փաստը որ այսօր հոս կանգնած էք ամուր ու կը նայիք ապագային, կը նշանակէ թէ դպրոցը եղած է՝ ձեզի ապաւնէ: Իր կրթական առաքելութեան հանդէպ ոչ-շուկայական մօտեցումը, աշակերտութեան փոքրաթիւ քանակը նոյնպէս նպաստեցին, որ այս միջավայրին մէջ փնտռենք ու գտնենք ապաւնէ, երբ կը կարծէինք թէ աշխարհ կռնակ դարձուցած է մեզի:

Բարեբախտաբար չար աշխարհին մէջ բարին կորսուած չէ, բայց նոյնիսկ երբ զգաք, թէ ոչ մէկ ապաւնէ կայ, պիտի յիշէք, որ Աստուծոյ մէջ ունիք Գերագոյն Ապաւնէր, որ շօշափելի ապաստան մը չէ, ուստի սիոնական ամենաքանդ հրթիռներն իսկ չեն կրնար զայն քանդել: Ան ո՛չ ալ մահկանացու էակ է, որ ձեռափոխուի ու տկարանայ. ան չէ նաեւ աշխարհագրական սահմաններով ձշղուած տարածք, որ ենթակայ ըլլայ խարդաւանքներու եւ դաւաճանութեան: Երկնքի անսահմանափակութեան մէջ իսկ չսահմանափակուող այդ Գերագոյն Ապաւնէր ձեր իսկ հոգիին մէջ կը բնակի. եւ երբ որ աշխարհ խայթէ ու հարուածէ ձեզ, Իր քով ու Այնտեղ պիտի գտնէք հանգստութիւն ու նեցուկ:

Ա. Խրիստիան

ՀԱԳ 2023-2024-ի շրջանաւարտները.

12-րդ դասարան՝



Սիւնթա Օհանեան, Լեա Արծինեան, Տանա ապու Հժէյլի եւ Նարեկ Քեօշկերեան:

6-րդ դասարան՝



Վանի Նորշահեան, Փիթըր Այվագեան, Նժդեհ Արծինեան, Կարէն Թերզեան, Պշարա Մուսա, Նարի Քեօշկերեան, Ճիովանի Սալպաշեան, Փերլա Հաւանճեան (բարձր պատուոյ յիշատակութեամբ), Ռաֆայել Ֆրանսիս եւ Դալար Կիւլլեքճեան:

Մանկապարտեզ՝



Մարք Ղորդորեան, Միւր Աւեսեան, Սառա Ազգի, Կաել Թերզեան, Ժան-Փիլե Գոյլումճեան եւ Ալի Մաքքի:

Հանրաձանօթ եւ վաստակաշատ **CDLL (Cénacle de La Lumière)** ընկերութեան հետ ՀԱԳ կնքած է «Համագործակցութեան համաձայնագիր» մը, որով CDLL-ը արդէն սկսած է մեր աշակերտներուն համար վարել հոգեկան, առողջական, առողջապահական, ընկերային եւ այլ խնդիրներու մասին կանխարգելումի, իրազեկումի, զօրացումի շատ օգտաւէտ աշխատանիստեր: Մեր գործակցութիւնը պիտի շարունակուի գալ տարի՝ աւելի լայն ծրագիրներով, արդէն ընդգրկելով նաեւ ուսուցչակազմը եւ ծնողները:

Հինգշաբթի, 4 Ապրիլին ՀԱԳ-ի ուսուցչակազմն ու պաշտօնէութիւնը առիթը ունեցան ներկայ ըլլալու շատ շահեկան սեմինարի մը «**Բախումներու կարգաւորում**» նիւթով, զոր հրաշալիօրէն ներկայացուց դպրոցի նախկին երախտագէտ աշակերտներէն պարոն Արմէն Պալեան: Նշենք, որ Պալեան նախապէս ալ այլ նիւթերով խօսած է աշակերտներուն եւ ծնողաց:

Երկար տարիներու դադարէ ետք, այս տարի ՀԱԳ-ի ութ աշակերտներ մասնակցեցան ՀՄԸՄ-**ԼԵԿԱՄ**-ի ճատրակի, փինկ-փոնկի, հեծելարշաւի եւ դաշտային խաղերու մրցումներուն: Ուրախ ենք, որ իբրեւ առաջին փորձառութիւն, արդէն երկու աշակերտ իրենց տարիքային դասակարգումին մէջ արժանացան մետալներու գունդ հրելու մարզաձեւին մէջ՝ Պետրոս Կիլեքճեան (10-րդ) առաջին, իսկ Հրակ Քէօշկերեան (7-րդ), երկրորդ տեղերը գրաւելով: Հրակ առաջնութիւն շահեցաւ նաեւ հեծելարշաւի մրցումին:

Շաբաթ, 20 Ապրիլին ՀԱԳ-էն 6 աշակերտուհիներ մասնակցեցան Կրթութեան նախարարութեան կազմակերպած **գեղարուեստական մարմնամարզութեան** (artistic gymnastics) մրցումին, Gymbo կեդրոնին մէջ: Ուրախ ենք, որ 6 աշակերտներն ալ արժանացան մետալներու՝ իրենց տարիքային դասակարգումին մէջ:

Ուրբաթ, 26 Ապրիլ 2024-ին վարժարանիս աշակերտները ատենամարզանքի պահուն կոկիկ յայտագրով մը ոգեկոչեցին **հայոց ցեղասպանութեան 109 ամեակը**, խոստանալով միշտ յիշել ու պահանջել մեր իրաւունքներն ու տէր կանգնիլ մեր արդար դատին:





ՀԱԳ Ծնողաց մարմին

Հովանաւորութեամբ տիկին Թէնի Հասըրճեանի եւ կազմակերպութեամբ ՀԱԳ Ծնողաց մարմինին ու ներկայութեամբ ծնողներու, բարեկամներու եւ հիւրերու, Հինգշաբթի 16 Մայիսին Զալքայի «Ռուս Պէյրուս» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ



նախաճաշի հաւաք՝ սիրով ու ուրախութեամբ նշելու մարդկութեան ամէնէն նուիրական տօներէն մին՝ Մայրերու օրը: Նուագով ու պարով ելոյթ ունեցող դպրոցի շնորհալի աշակերտները յաւելեալ ուրակ հաղորդեցին սոյն հաւաքին:

Վարձքը կատար կազմակերպիչ տիկիններուն:

Շնորհակալութիւն հովանաւորին, բոլոր նուիրապտուններուն եւ ներկաներուն:



ՀԱԳ Տիկնանց ընկերային յանձնախումբ

Ինչպէս միշտ, Շաբաթ 11 Մայիսին ալ ՀԱԳ Տիկնանց ընկերային յանձնախումբը շատ յաջող շրջապտոյտ մը կազմակերպած էր, այս անգամ դէպի Հիւսիս՝ Քուրա, Մզիարա եւ Զղարթա:

Վարձքը կատար անխոնջ տիկիններուն:



Սուրբ գիրքի ակունք
Պտոյտ դէպի Պաթրոն



Մանկապարտէզի պտոյտ - Recreao Dbayah



Աշակերտական պտոյտ
- Hillhout Village -



Հայկական զարդանաշխերու

Վորագրուրեան աշխատանիստ

Կը շնորհաւորենք 7-րդ Կարգի աշակերտ Հրակ Պաւեանը որ «Ճիշդ հիշենք» մրցանքին վերջին հանգրուանին լիբանանահայ մասնակից դպրոցներու իր դասակարգին մէջ Բ. հանդիսացաւ:



Վերջին շաւղ



10 քմ. Մարաթոն - Այնճար
Նուիրուած ՄԱՀԱԵՄ-ի 100-ամեակին



Ուսուցչակազմի տարեկերջի պտոյտ



ՀԱԳ-ի 2023-2024 տարեշրջանի ասարտական հանդեսը տեղի ունեցավ Շաբաթ, 22 Յունիս 2024-ին, դպրոցի շրջափակին մէջ: Երկրորդական բաժանմունքի կենսաբանութեան եւ տնտեսագիտութեան ճիւղերու չորս շրջանաւարտներ եւ նախակրթարանի տաս ընթացաւարտներ ստացան իրենց վկայականները:

Հանդիսաւոր մուտքէն ետք հնչեցին Լիբանանի եւ Հայաստանի քայլերգերը՝ կատարողութեամբ դպրոցի նուագախումբին (*խմբավար՝ պարոն Հենրի Իշխանեան*): Հայ ակետ. առաջին եկեղեցւոյ հովիւ վեր. Ժիրայր Ղազարեան կատարեց ընթերցում Աստուածաշունչէն եւ մատուցեց աղօթք, ապա տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշլեան ողջունեց ներկաները եւ ծանօթացուց բանախօսը՝ տիկին Գարմա Էքմէքճին: Հիւրը խօսեցաւ արհեստագիտութեան, յատկապէս արհեստական բանականութեան արագ զարգացումին մէջ չմոլորելու մասին: Ան յայտնեց, թէ ՀԱԳ-ի մէջ իր ձեռք բերած արժէքներն ու հմտութիւնները առ այսօր կը շարունակեն օգտակար հանդիսանալ իրեն:

Գեղարունեստական բաժինը բաղկացած էր ասմունքէ՝ Պ. Սեւակ «Իմ ժողովրդին» (6-րդ դասարան), պարէ՝ «Նազպար» (*Դալար Տաքեսեան եւ Սէրի-Ռոզի Շահինեան*), մենանուագէ՝ Է. Սաթի «Կնոսիէն թ. 1» (*Անյրէա Տէմիրճեան*) եւ նուագախումբի ելոյթէն՝ Ս. Յակոբեան «Պատգամ Բարեկամիս» եւ Գուսան Աշոտ «Սարի սիրուն եար»

(*ջութակ՝ Անյրէա Տէմիրճեան եւ Վահան Աւետեան, դաշնամուր՝ Նարեկ Չոլագեան եւ Վարդան Աւետեան, թաւ ջութակ՝ Հրակ Պալեան, կիթառ՝ Տարօն Գոնայեան*):

Վկայականներու բաշխումէն եւ մրցանակներու տուջութենէն ետք տնօրէնը արտասանեց իր «Հուսկ բանք»-ը, իբրեւ առանցք ունենալով «ապաւն» բառը: Խօսքը ամբողջութեամբ կարելի է կարդալ հետեւեալ յղումով.

<https://aec100years.wordpress.com/2024/06/27/hուսկ-բանք-2024/>

1963 եւ 1964 տարիներու 5 շրջանաւարտներ՝ տիկնայք Երանուհի Սիսլեան-Չոլագեան, Նեսթա Աթիքեան-Սաղրեան եւ պարոնայք Ժագ Էքմէքճի, Պարոյր Աղպաշեան եւ Քերոլբէ Չոպանեան ստացան վերերան շրջանաւարտի վկայագրեր ու յուշանուէրներ ձեռամբ հովիւին եւ հոգաբարձութեան ատենապետ պարոն Ներսէս Պաղտոյեանի, իրենց շրջանաւարտութեան վաթսունամեակին առթիւ:

Հովիւին օրհնութեան աղօթքով ասարտեցաւ հանդիսութիւնը, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, կազմակերպութեամբ դպրոցի Ծնողաց մարմինին եւ Տիկնանց օժանդակ յանձնախումբին:

Նշենք, որ 2 Յունիսին Հայ ակետ. Ա. Եկեղեցւոյ պաշտամունքին ընթացքին կատարուեցաւ Շրջանաւարտներուն համար յատուկ արարողութիւն:



ԴԱՆԱՐ ՀԱՅՏՈՍԹԵԱՆ

(2016-ի շրջ.)

Master of Public Policy-
International Relations
and National Security
Pepperdine University
Malibu, California



ՌԵՏԱ ԱԹՈՒԷ

(2018-ի շրջ.)

BE in Mechatronic
Engineering with distinction
LAU



ՆԱՐԻՆԷ ԱՊՐՈՒՄԵԱՆ

(2020-ի շրջ.)

BA in Early Childhood
Education with honours
HU



ԿԱՐԻՆ ՏԵՍԻՐՃԵԱՆ

(2020-ի շրջ.)

BE in Computer Engineering
with distinction
LAU



ՄԱՆՈՒԷԼ ԱՆՃԱՃԵԱՆ

(2020-ի շրջ.)

BA in Digital media
with honours
USEK



ՍԵԼԻՆ ՀԱՄՍՈՒՏ

(2021-ի շրջ.)

BA in Television and Film
with honours
LAU



Հպարտութիւն է ինձի, եւ վստահ եմ բոլորիս համար, որ մեր բոլոր շրջանաւարտներն ալ աւարտած են «Յիշատակութեամբ»: Սա կը խօսի իրենց ջանասիրութեան, բայց նաեւ ՀԱԳ-էն ներս իրենց ստացած կրթութեան ալ մասին: Հպարտ եմ բոլորով եւ յաջողութիւն կը մաղթեմ գործի ասպարեզին մէջ:

Ա.Բ.

ԼՀԳ երկարամեայ նախկին աշակերտ դոկտ. Նուպար Աֆէեան 2 միլիոն տոլար տրամադրած է Արցախի աւելի քան 100,000 գաղթականներու օժանդակութեան:

Դոկտ. Աֆէեան 16 Մայիս 2024-ին, ընկերակցութեամբ Արևմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ Խաժակ Արք. Պարսամեանի, ընդունուած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարե-




գին Բ.ի կողմէ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ: Ան նաև Պոսթոնի MIT անուանի համալսարանի տիտղոսներու բաշխման ամալերջի հանդէսի պատգամաբերն էր:

Միջազգային քրեական դատարանի նախկին ընդհանուր դատախազ Լ.Մ. Օքամփօ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանին մէջ իր 19 Ապրիլ 2024-ի դասախօսութեան ընթացքին նշեց, թէ Օրէյնճ Քաունթիի Գերագոյն ատենանի դատաւոր տիկ. Կասիա Արզարեան (1974 – 1983 աշակերտուողի ՀԱԳ-ի) Լահէյի Միջազգային ատենանին մէջ դատ բացած է Ազրպէյճանի նախագահ Ալիևի դէմ, ցեղասպանութեան մեղադրանքով՝ շատ զօրաւոր փաստարկներով:



ԼՀՀ Սփիւռքի նախկին նախարար Հրանուշ Յակոբեանի եռա-հատորներու 15 Ապրիլ 2024-ի շնորհանդէսին բանախօսներուն մէջ էր երկարամեայ վաստակաւոր խմբագիր, բանասէր և ուսուցիչ Պարոյր Աղպաշեան (1964-ի շրջանաւարտ), իսկ օրուան գեղարուեստական բաժնին մէջ մաէսթրօ Կարօ Աւեսեան (1998-ի շրջանաւարտ) խմբավարեց Բ. Կանաչեանի անուան նուագախումբը:

Հայոց Յեղասպանութեան 109-ամեակի նշումը Պոսթոնի մէջ կատարուեցաւ 19 Ապրիլին Մասեչուսեցի ներկայացուցչական պալատին մէջ, իսկ 21 Ապրիլին՝ Պոսթոնի Հայկական ժառանգութեան զբօսայգիին մէջ: Ձեռնարկին ընթացքին ԱՄՆ-ի մէջ Հայաստանի դեսպան տիկ. Լիլիթ Մակունցի պաշտօնական խօսքը փոխանցեց դեսպանատան մշակութային կցորդ տիկ. Շոդակ Յովհաննէսեան (ծն. Վարժապետեան, 1963-ի շրջանաւարտի):




Պ Ս Ա Կ

2015-ի շրջանաւարտուողի օրդ. Կասիա Հաճէքեան 19 Յունուար 2024-ին քաղաքացիական ամուսնութիւն կնքեց պր. Մուշեղ Պզգրիկեանի հետ, Պելճիքա:

ԲԱԽՏԱԴՈՐՈՒԹԻՒՆ

2006-ի շրջանաւարտուողի տիկ. Մարիա (ծն. Փալազեան) Բարսեղեան և ամուսինը բախարաւորութեան դուարրով մը՝ Նարին, 19 Մաիս 2024, Լոնարոնի մէջ:

Հայոց Ցեղասպանության 109-ամեակի Անթիլիասի մայրավանքին մէջ 23 Ապրիլ 2024-ին տեղի ունեցած համահայկական հաւաքին առընթեր ձայնասփիռով սփռուող ելոյթներ ունեցան քսանի մօտ լիբանանահայ մտաւորականներ որոնց շարքին դուկտ. Զաւէն Մնրրլեան (1955-ի շրջ.) և դուկտ. Արմէն Իւրնէշլեան՝ պատասխանելով իրենց ուղղուած հարցումներուն: Ելոյթները միաժամանակ կը սփռուէին մայրավանքի բակը տակաւ լեցնող հասարակութեան և քայլարշաւի մասնակիցներուն:



Միջանակակիւր գրող և Քալիֆորնիոյ Տէյլիս համալսարանի Արուեստից պատմութեան դասախօս տիկ. Հեղնար Ուիրթընփա (ծն. Զէյթլեան, 1986-ի շրջ.), 7 Ապրիլ 2024-ին ՀՕՄ-ի և Համազգայինի կողմէ կազմակերպուած ՀԱԳ-ի նախկին ուսուցչուհի տիկ. Սոնա Զէյթլեանի 70-ամեայ ծառայութեան հանդիսութեան խօսեցաւ իր մօր մասին Կլենտլիի Գարամանուկեան երիտասարդական կեդրոնին մէջ:

ՀԱԳ-ի պատուակալ տնօրէն պատմաբան դուկտ. Զաւէն Մնրրլեան 26 Ապրիլ 2024-ին Հայկազեան Համալսարանի Book Club հանդիպումին, ակումբի պատասխանատուին՝ ՀԱԳ-ի



նախկին հոգաբարձու Տիկ. Թննի Հասըրճեանի բացման խօսքէն ետք, խօսեցաւ իր վերջին հրատարակութիւններուն և «Հայոց ցեղասպանութիւնը և բրիտանական դիւանագիտութիւնը» նիւթին մասին:

Անթոնի Օպէյտ (2020-ի շրջ.) 14 Ապրիլ 2024-ի Պուրճ Համուտի «Մեր շուկան» գործունէութեան ծիրէն ներս մասնակցեցաւ երգի ելոյթով:


Հրակ Մամիկոնեան (2023-ի շրջ.) Յարութ Գնդունիի բեմադրած «Օթէլ փլազայի սենեակը» թատերախաղին մէջ (7 – 9 Յունիս 2024) սպասեակի դեր ստանձնած էր:



† 1949-ի շրջանաւարտ և ՀԱԳ-ի նախկին մնայուն ուսուցչուհի (1977 – 1987) տիկ. Մարիժան Էթոյեան (ծն. Գնաճեան, 1932-ին) 19 Մարտ 2024-ին մահացած է Քալիֆորնիոյ մէջ:



† 1964-ի շրջանաւարտ տիկ. Անահիտ Փոլարեան (ծն. Քիլէճեան, 1945-ին), յանկարծամահ եղած է 13 Մարտ 2024-ին Անթիլիասի իր բնակարանին մէջ:




† 1960-ի շրջանաւարտ, գիրքերու հեղինակ տիկ. Արփինէ Կրէնիէ (ծն. Գոնիալեան, 1943-ին), ԱՄՆ-ի մէջ մահացած է 9 Յունուար 2024-ին:




† 1957-ի շրջանաւարտ Սեդրակ Գազանճեան (ծն. 1940-ին) 14 Դեկտեմբեր 2023-ին մահացած է Ասնիէրի (Ֆրանսա) մէջ:

† 1946-51-ի ՀԱԳ-ի նախակրթարանի նախկին աշակերտ Վարուժան Սաղորճեան (ծն. 1940-ին) 14 Ապրիլ 2024-ին մահացած է Ֆրեզնոյի մէջ:



† Յապաղումով տեղեկացանք թէ 1963-ի շրջանաւարտուհի Լուսին Շէյրուկեան (ծն. 1942-ին) 12 Յուլիս 2023-ին մահացած է անողորմ հիւանդութեան հետեւանքով:



† Նախկին աշակերտ Յակոբ Տերվիշեան (ծն. 1952-ին) Լոս Անճելոսի մէջ մահացած է 8 Յունիս 2024-ին, յետ անողորմ հիւանդութեան:



† 1964-ի շրջանաւարտուհի տիկ. Լորէթ Թապէթ (ծն. Արապեան, 1945-ին), Անթիլիասի մէջ (Ֆրանսա) մահացած է 30 Մայիս 2024-ին յետ երկարամիջ հիւանդութեան. յուղարկաւորութիւնը կատարուած է Թորոնթոյի մէջ 20 Յունիսին:



ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՐԱՏՈՒ-ի նախորդ թիվն է վեր շնորհակալությամբ ստացուած են հետեւեալ նուիրատուութիւնները:
Բոլոր նուիրատուութիւնները կանխիկ տոլարով են, բացի եթէ նշուած է այլապէս:

ԱՄԱԱ-ԷՆ

Կրթաթոշակի նեցուկ, Գ. շրջան	\$3175
Արտակարգ վիճակի նպաստ	\$4818

ԱՄԱԱ-Ի ՄԻՋՈՑՈՎ

Շրջանաւարտ Առնոլտ Պապիկեան	\$1000
----------------------------	--------

ՄԱՀԱԵ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Foundation Des Cedres	\$3195
-----------------------	--------

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԵՆ

2023-2024 Բ. կիսամեակի ամսաթոշակներու նեցուկ	\$4224
--	--------

ՈՒՍՈՒՑՉԱՅ ՖՈՆՏԻՆ

Տիկ. Յասմիկ Հալեպլեան (ԱՄՆ)	\$100
Շրջանաւարտ Ասատուր Խանճեան ի յիշատակ իր հոր՝ Գրիգոր Խանճեանի	\$50
Տիար Գեորգ Փոլատեան ի յիշատակ իր կնոջ՝ Անահիտ Փոլատեանի	\$200
Չէօրէքճեան ընտանիք ի յիշատակ Երուանդ Չէօրէքճեանի	5 միլիոն լ.ո.

ՎՐԻՊԱԿ

Նախորդ թիւի նուիրատուութեանց ցանկին մէջ Չաւէն Մահսերեճեանը պէտք է ըլլայ **2արեւ Մահսերեճեան**:

Կը հայցենք նուիրատուին ներողամտութիւնը:



Խմբագիր՝ ՏԵՐԵՆ ՊՈԿՏ. ԱՐՄԵՆ ԻՐԱՆԵՇԼԵԱՆ
Խորհրդատուներ՝ ՏԻԱՐ ՆԵՐՍԵՍ ՊԱՐՏՈՅԵԱՆ
ԵԶՊԱՆՈՒՄ՝ ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ
Ս.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE

P.O. Box 3672-Beirut

Tel: 01 349 816 Fax: 01 751 469

E-mail: A_E_C@cyberia.net.lb

Website: aecbeirut.edu.lb

Facebook: Armenian Evangelical College